ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/38Շ

ք. Երևան «20» «10» 2021 թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի փոխարինող Ա. Ազատյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հիպերնովա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ալեքսանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Մ S-3-15. /Հ-15/ - Ալաշկերտ (S-3-14) ավտոճանապարհի կմ0+000-կմ1+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն օրացուցային գրաֆիկի (Հավելված N 2):

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **3 (երեք) տարին**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **199,000,000 (մեկ հարյուր իննսունինը միլիոն) ՀՀ դրամ՝ որից 33,166,667 (երեսուներեք միլիոն հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում

գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի

մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՀ 900011025823 ՀՎՀՀ 02815457 գլխավոր քարտուղարի փոխարինող Ա. Ազատյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ	«Հիպերնովա» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Գարեգին Նժդեհի 17, 33տ «Արմսվիսբանկ» ՓԲԸ ՀՀ 2500010735690100 ՀՎՀՀ 00924152 տնօրեն Ա. Ալեքսանյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված թիվ 1
« 20 » « 10 » 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/38Շ ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ
ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
Տ-3-15. /Հ-15/ - Ալաշկերտ (Տ-3-14) ավտոճանապարհի կմ0+000-կմ1+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

22 հազ. դրամ

N	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	I. Հողային աշխատանքներ				
1	33Գ-III կարգի բնահողի մշակում էքս. 1.0մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7.0կմ	մ³	1700	1.505	2558.44
2	33Գ-III կարգի բնահողի մշակում բուլդոզերով տեղափոխում 50մ կուտակումով բարձում էքս. 1.0մ³ շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 7.0կմ	մ³	1120	1.505	1685.559
3	33Գ-III կարգի բնահողի մշակում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7.0կմ	մ³	135.29	1.505	203.606
4	33Գ-III կարգի բնահողի մշակում բուլդոզերով տեղափոխում 20մ լիցք (հարթում. ջրում. խտացում)	մ³	358.4	1.505	539.379
				Ընդամենը I	4986.982
	II. Կողնակներ				
1	Կողնակների ամրացում ավազակոպճային նյութով h=10սմ	մ²	515	0.526	270.642
				Ընդամենը II	270.642
	III. Երթևեկելի մաս				
1	Մանրահատիկ խիտ տաք ա/բ h=4սմ տիպ "Ե"	մ²	10159.980	3.58	36370.806
2	Խոշորահատիկա/բ h=6սմ	մ²	10159.980	4.176	42432.607
3	Խճավազային հիմք (C-5) h=20սմ 100մ² համար խիճ (40-70) 10% - 2.6մ³ խիճ (20-40) 35% - 9.1մ³ խիճ (10-20) 20% – 5.2մ³ խիճ (5-10) 10% – 2.6մ³ խիճ (0-5) ավազ 25% – 6.5մ³ ջուր-1.1մ3	մ²	10159.980	2.387	24247.204
	Տեխ. անցում				
1	Միաձույլ բետոն Ե-20 h=20սմ	մ²	140	6.563	918.818
2	Ավազակոպճային շերտ h=15սմ	մ²	140	1.79	250.587
				Ընդամենը III	104220.002
	IV. Իջատեղեր և մուտքեր				
1	33Գ-III կարգի բնահողի մշակում էքս. 0.65մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7.0կմ	մ³	442.29	1.372	606.937
2	Ե տիպի մանրահատիկ խիտ տաք ա/բ h=4սմ	մ²	2881.13	3.46	9970.104
3	Խճավազային հիմք C-5 h=12սմ 100մ2 համար խիճ (40-70)- 10% - 1.56մ3 խիճ (20-40)- 35% - 5.46մ3 խիճ (10-20)- 20% - 3.12մ3 խիճ (5-10)- 10% - 1.56մ3 խիճ (0-5)- ավազ 25% - 3.9մ3	մ²	2881.13	1.754	5052.441

	ջուր-1.1մ3				
	Մետ. խողովակներ Ø 273/5մմ				
4	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	8.78	1.79	15.715
5	Մետ. խողովակների Ø 273/5մմ տեղադրում	գծմ	247	33.412	8252.657
6	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	գծմ	231	0.358	82.694
7	Միաձույլ բետոն B-20 հատման հատվածում	մ³	3.2	29.832	95.462
	Տեխ անցում				
	Ավազակոպճային շերտ h=15սմ	մ³	10.12	1.79	18.114
	Մոնոլիտ բետոն B-20 h=20սմ	մ³	13.494	6.563	88.561
				Ընդամենը IV	24182.684
	V. Մայթեր				
1	Բետոնե սալիկների. ձևավոր տեղադրում. մոխրագույն h=6սմ	մ²	2108.9	6.563	13840.682
2	Ավազացեմենտային չոր խառնուրդ h=9սմ (70%-30%)	մ²	2108.9	4.172	8797.685
3	Բետոնե եզրաքար 15x30սմ - միաձույլ բետոնե հիմք B-15 1գծմ-0.035մ³-10սմ - ավազակոպճային շերտ h=5սմ 1գծմ-0.0125մ³	գծմ	1777.8	4.176	7424.886
4	Միաձույլ B-15 բետոնե եզրաշար 10x20սմ - ավազակոպճային շերտ h=5սմ. 1գծմ-0.005մ3	գծմ	371	2.983	1106.758
5	Միաձույլ B-20 բետոնե եզրաշար 15x30սմ - ավազակոպճային շերտ h=5սմ. 1գծմ-0.0075մ3	գծմ	605	3.58	2165.786
6	Միաձույլ B-20 բետոնե 20x50սմ եզրաշար - ավազակոպիճ . 1գծմ-0.01մ3	գծմ	551.4	3.58	1973.908
7	Հավաքովի բետոնե 15x30սմ եզրաքար (անվտանգություն) - միաձույլ բետոնե հիմք h=10սմ B-15 1գծմ-0.015մ³ - ավազակոպիճային շերտ h=5սմ 1գծմ-0.0075մ³	հատ	397	2.983	1184.321
8	Բազրիք (5 սեկցիաներ) (ձախ կմ0+241-կմ0+253)	հատ	5	32.815	164.075
				Ընդամենը V	36658.1
	VI. Հավաքովի ե/բ 30x34սմ վաքեր				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	27.092	5.37	145.476
2	Ե/բ 30x34 վաքերի տեղադրում	հատ	139	47.731	6634.583
3	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ²	525.55	0.269	141.219
				Ընդամենը VI	6921.279
	VII. Հավաքովի ե/բ վաքեր LR-4				
1	Քայքայված ե/բ վաքերի ապամոնտաժում բարձում ա/ի վրա և տեղափոխում լցակույտ7.0կմ	մ³	40.81	2.983	121.743
2	Ավազակոպճային շերտ h=20սմ	մ³	45.56	4.773	217.462
3	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ²	654.925	0.281	184.11
4	Ե/բվաքեր LR-4	հատ	95	98.682	9374.787
5	հատման հատվածի միաձույլ բետոն (30x34 և LR-4)	մ³	2	29.832	59.664
6	LR մաքրում ձեռքով. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7.0կմ	մ³	48.48	2.387	115.699
				Ընդամենը VII	10073.465
	VIII. Հենապատ (կմ 0+241-կմ0.253)հիջատեղ				
1	33r-III բնահողի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7.0կմ	մ³	5.4	1.79	9.665
2	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	0.6	5.37	3.222
3	Միաձույլ բետոն B-20	մ³	3.6	61.76	222.335
4	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ²	12	0.298	3.58
				Ընդամենը VIII	238.802
	IX. Նշագծում				

1	Նշագծման ընդհանուր մակերեսը	մ²	246.1	1.345	331.038
2	Արհեստական անհարթություն	մ²	237.6	4.176	992.324
				Ընդամենը IX	1323.361
	X. Ճանապարհային նշաններ				
1	Նոր ճան. նշանների տեղադրում. այդ թվում՝				
	- նախազգուշացնող	հատ	8	32.815	262.519
	- առավելության	հատ	36	32.815	1181.338
	- արգելող	հատ	15	32.815	492.224
	- թելադրանքի	հատ	6	32.815	196.86
	- հատուկ թելադրանքի	հատ	32	32.815	1050.078
	- լրացուցիչ տեղեկատվության	հատ	3	32.815	98.445
	- անհատական նախագծման	հատ/մ²	9.55	32.815	313.383
2	Բետոն B-15	մ³	7.455	49.486	368.914
	Կանգնակ մետ. խող 57/4մմ	հատ	71	10.739	762.5
				Ընդամենը X	4726.29
	XI. Մետաղական ժարտ=273մմ խողովակների տեղադրում իջատեղ				
1	Հող. աշխատանքներ խողովակի փոսորակների փորման համար ձեռքի աշխատանքով բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 7.0 կմ միջին հեռ. 33Г-III	մ³	6.5	1.79	11.634
2	Հող. աշխատանքներ խողովակի փոսորակների փորման համար ձեռքի աշխատանքով կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար 33Г-III	մ³	24	1.79	42.958
3	Ավազակոպճային նախապ. h=10սմ	մ³	1.53	4.176	6.39
4	Ջրհորի կառուցում միաձույլ բետոնից B 20. F100	մ³	6.2	32.815	203.453
5	Որմնակապային ամրաններ Ø16 A500c l=45սմ	կգ	5.68	0.597	3.389
6	Մետաղական ժարտ=273մմ խողովակի տեղադրում 1գծմ=33.05կգ. պատի հաստ. 5մմ	գծմ	20.5	46.96	962.689
7	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով				
	խողովակ	գծմ	19.3	0.537	10.364
	բետոն	մ²	29.81	0.298	8.893
8	Հետադարձ լիցք				
	ձեռքի աշխատանքով	մ³	24	1.79	42.958
9	Մետաղական ցանցի պատրաստում և տեղադրում	կգ	201.084	0.895	179.961
10	Նոր շլյուզի. ուղղանկյուն անկյունակներից (63x5 1գծմ = 4.81կգ) կազմված. շրջանակի տեղադրում:	կգ	30.784	0.895	27.55
	մետաղական թիթեղ h=3մմ	կգ	28.08	0.895	25.13
11	Գոյություն ունեցող d=530մմ մետ. խողովակի ապամոնտաժում վերադարձ սեփականատիրոջը	գծմ	11	2.983	32.815
				Ընդամենը XI	1558.183
	XII.Մետաղական ժարտ=273մմ խողովակների տեղադրում				
1	Հող. աշխատանքներ խողովակի փոսորակների փորման համար ձեռքի աշխատանքով բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 7.0 կմ միջին հեռ. 33Г-III	մ³	8	2.983	23.865
2	Հող. աշխատանքներ խողովակի փոսորակների փորման համար ձեռքի աշխատանքով կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար 33Г-III	մ³	21	2.983	62.647
3	Ավազակոպճային նախապ. h=10սմ	մ³	1.515	4.176	6.327
4	Ջրհորի կառուցում միաձույլ բետոնից B 20. F100	մ³	5.91	32.815	193.936
5	Որմնակապային ամրաններ Ø16 A500c l=45սմ	կգ	5.68	0.895	5.083
6	Մետաղական ժարտ=273մմ խողովակի տեղադրում 1գծմ=33.05կգ. պատի հաստ. 5մմ	գծմ	20.3	44.022	893.654
7	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով				
	խողովակ	գծմ	19.1	0.537	10.256
	բետոն	մ²	28.588	0.298	8.528
8	Հետադարձ լիցք	մ³	21	2.387	50.117

	ձեռքի աշխատանքով				
9	Մետաղական ցանցի պատրաստում և տեղադրում	կգ	201.084	0.895	179.961
10	Նոր շլյուզի. ուղղանկյուն անկյունակներից (63x5 1գծմ = 4.81կգ) կազմված. շրջանակի տեղադրում:	կգ	30.784	0.895	27.55
	մետաղական թիթեղ h=3մմ	կգ	28.08	0.895	25.13
11	Գոյություն ունեցող d=325մմ մետ. խողովակի ապամոնտաժում վերադարձ սեփականատիրոջը	գծմ	8.5	2.983	25.357
				Ընդամենը XII	1512.413
	XIII.Մետաղական ժարտ=630մմ խողովակների տեղադրում				
1	Հող. աշխատանքներ խողովակի փոսորակների փորման համար էքս.0.65 մ3 շ.տ. կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար 33r- III	մ³	11	2.387	26.252
2	Հող. աշխատանքներ խողովակի փոսորակների փորման համար էքս.0.65 մ3 շ.տ. կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար 33r- III	մ³	12	2.387	28.638
3	Ավազակոպճային նախապ. h=10սմ	մ³	0.45	4.176	1.879
4	Խճային հիմք h=20սմ	մ³	1.95	5.37	10.471
5	Ջրհորի կառուցում միաձույլ բետոնից B 20. F100	մ³	5.556	44.748	248.618
6	Մետաղական ժարտ= 630 մմ խողովակի տեղադրում 1գծմ=107.55կգ. պատի հաստ. 7մմ	գծմ	12.8	131.26	1680.125
7	Որմնակապային ամրաններ Ø16A500c l=45սմ	կգ	2.84	1.014	2.881
8	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով				
	խողովակ ժարտ= 630 մմ	գծմ	12.2	0.537	6.551
	բետոն	մ²	21.58	0.298	6.438
9	Հետադարձ լիցք ա) բուլդոզերով	մ³	10	2.387	23.865
	բ) ձեռքի աշխատանքով	մ³	2	2.387	4.773
10	Մետաղական ցանցի պատրաստում և տեղադրում	կգ	143.86	1.014	145.914
11	Նոր շլյուզի. ուղղանկյուն անկյունակներից (63x5 1գծմ = 4.81կգ) կազմված. շրջանակի տեղադրում:	կգ	46	1.014	46.657
	մետաղական թիթեղ h=3մմ	կգ	42.12	1.183	49.847
12	Գոյություն ունեցող d=720մմ մետ. խողովակի ապամոնտաժում վերադարձ սեփականատիրոջը	գծմ	9.4	4.773	44.867
				Ընդամենը XIII	2327.776
				Ընդհանուրը	199000

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%

*** Կապալառուն աշխատանքները կատարում է*

Չափաբաժին 1՝ S-3-15. /Հ-15/ - Ալաշկերտ (S-3-14) ավտոճանապարհի կմ0+000-կմ1+000 հատվածում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարի փոխտեղակալ
Ա. Ազատյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հիպերնովա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Գարեգին Նժդեհի 17, 33տ
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
ՀՀ 2500010735690100
ՀՎՀՀ 00924152
տնօրեն
Ա. Ալեքսանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 2
« 20 » « 10 » 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄՄՇՀԲ-2021/38Շ ծածկագրով պայմանագրի

ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
ՕՐԱՑՈՒՅՑԻՆ ԳՐԱՖԻԿ
Տ-3-15. /Հ-15/ - Ալաշկերտ (Տ-3-14) ավտոճանապարհի կմ0+000-կմ1+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 70 օր հետո
1	Հողային աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 40 օր հետո
2	Կողնակներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 65 օր հետո
3	Երթևեկելի մաս	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 65 օր հետո
4	Իջատեղերի նորոգում	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 70 օր հետո
5	Մայթեր	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 55 օր հետո
6	Ջրահեռացման համակարգի իրականացում	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 45 օր հետո

7	Մետաղական խողովակներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 35 օր հետո
8	Անվտանգության էլեմենտներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 70 օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո**	**ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 70 օր հետո, բայց ոչ ուշ, քան ֆինանսական միջոցներ նախատեսվելու տարվա դեկտեմբերի 10-ը**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարի փոխարինող
Ա. Ազատյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հիպերնովա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Գարեգին Նժդեհի 17, 33տ
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
ՀՀ 2500010735690100
ՀՎՀՀ 00924152
տնօրեն
Ա. Ալեքսանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 20 » « 10 » 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/38Շ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177/591	ճանապարհների վերանորոգման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարի փոխարինող
Ա. Ազատյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հիպերնովա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Գարեգին Նժդեհի 17, 33տ
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
ՀՀ 2500010735690100
ՀՎՀՀ 00924152
տնօրեն
Ա. Ալեքսանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 4
« 20 » « 10 » 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/38Շ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 20 » « 10 » 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/38Շ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	Ընդունեց հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
_____ ստորագրություն	_____ ստորագրություն